Հասցեատեր՝

«Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ David.a.tsaturyan@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16.11.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան
	Դավիթ Բակլաչյան

Վարույթ՝	ՊԼ-078
Խախտում՝	1. «Արարատ-Արմենիա» թիմի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի (124) անվայել վարքագծի և ոչ սպորտային պահվածքի դրսևորումը (Հավելված 1 Ա, 21-րդ կետ) 2. «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից մրցավարների հասցեին հայհոյանքներ հնչեցնելը, անհարգալից արարքներ թույլ տալը (Հավելված 1 Ա, 23-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 IDBank Պրեմիեր Լիգա
Խաղ՝	«Նոա» - «Արարատ-Արմենիա», 07.11.2023թ. (1:0)

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը և նույն մրցաշրջանում նույն ֆիզիկական անձ ֆուտբոլային սուբյեկտի կողմից կարգապահական խախտման կրկնակիությունը՝ «Արարատ-Արմենիա» թիմի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանին (124) զրկել ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 3 (երեք) խաղով և տուգանել «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին նվազագույն աշխատավարձի

երկուհարյուրապատիկի՝ 200,000 ՀՀ դրամի չափով: Որակազրկումը տարածվում է սկսած 16.11.2023թ.-ից:

2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը և 22-րդ հոդվածի 1-ին կետը՝ տուգանել «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին նվազագույն աշխատավարձի մեկհարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: